Տեղեկագիր թիվ 1 (հունվար 2021թ.)

Հայ դատի ամփոփագրեր

ՀՅԴ Հայ դատի Կենտրոնական գրասենյակը՝ հաշվի առնելով պատերազմական գործողություններին զուգընթաց Հայ դատի համաշխարհային ցանցի ակտիվ գործունեությունը՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ից հրապարակում է Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների գործունեության հիմնական արդյունքների ամփոփագրեր, որոնք լայնորեն տարածվում են լրատվամիջոցներով: 2020 թվականի վերջին եռամսյակում հրապարակվել են թվով 13 ամփոփագրեր, որոնց կարող եք ծանոթանալ հետևյալ **հղումով**:

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

Մենենդեզը՝ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ

Հունվարի 7-ին հանձնախումբը, առանձին հաղորդագրությամբ, շնորհավորեց մեր ժողովրդի մեծ բարեկամ, Սենատում Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի համահեղինակ, սենատոր Ռոբերտ Մենենդեզի՝ Սենատի առանցքային հանձնաժողովներից մեկի՝ արտաքին

հարաբերությունների հանձնաժողովի նախագահի ընտվելու առթիվ:

Text Link



Հունվարի 13-ին Հայ դատի հանձնախմբին հղված նամակով սենատոր Շելդոն Ուայթհաուսը, լիովին կիսել է հանձնախմբի մտահոգությունները՝ կապված խաղաղ հայ բնակչության հանդեպ հարձակման ժամանակ Ադրբեջանի կողմից օգտագործված թուրքական անօդաչուների կազմության մեջ ամերիկյան արտադրամասերի առկայության հետ: Սենատորը կարծիք է հայտնել, որ ամերիկյան ընկերությունները պետք է ձեռնպահ մնան, այնպիսի արտահանումներից, որոնք կարող են օգտագործվել հանցագործությունների կամ մարդու իրավունքների խախտումների համար:

Հունվարի 19-ին Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ քննարկումներ են եղել ԱՄՆ Սենատում՝ նախագահ Բայդենի կողմից, իբրև պետքարտուղարի թեկնածու առաջադրված Էնթնի Բլինքենի թեկնածության քննարկման ժամանակ:

Մենենդեզը նաև հույս է հայտնել, որ Սպիտակ տան վարչակազմը կճանաչի Հայոց ցեղասպանությունը՝ նկատելով, թե ինչ դժվար է Հայաստանում ԱՄՆ դեսպանների համար այցելել Ցեղասպանության հուշահամալիր և չարտասանել ցեղասպանություն բառը: Սենատորը նաև կարծիք է հայտնել, որ Թրամփի վարչակազմը Էրդողանին «գուրգուրում էր»:

կարդալ ավելին

ԱՄՆ-ն կմեծացնի իր ներգրավածությունը՝ հասնելու Ղարաբաղյան հակամարտության վերջնական լուծմանը, որը կապահովի Ղարաբաղի անվտանգությունը. պետքարտուղարի թեկնածու Ա. Բլինքեն

Ի պատասխան հանձնաժողովի նախագահ Մենենդեզի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացում ԱՄՆ-ի վերակտիվացմա և նաև Հայաստանի հետաքրքրություններն արտահայտող լուծման հասնելու վերաբերյալ հարցին՝ Բլինքենը հաստատել է, որ ինքը «կխթանի ԱՄՆ ներգրավածությունը՝ հասնելու Ղարաբաղյան հակամարտության վերջնական լուծմանը, որը կապահովի Ղարաբաղի անվտանգությունը և կբացառի նոր պատերազմի բռնկումը:

կարդալ ավելին

Հունվարի 19-ին Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը կոշտ քննադատության է

ենթարկել ԱՄՆ հեռացող վարչախմբին՝ Թուրքիայի հետ փոխըմբռնման հուշագիր ստորագրելու համար, ըստ որի ԱՄՆ-ն ընդունում է Թուրքիայի իրավունքները իր տարածքում այլ ժողովուրդների հսկայական մշակութային ժառանգության նկատմամբ: Հայ դատի հանձնախմբի քննադատությանը միացել են նաև ամերիկահունական ղեկավարների խորհուրդը և Քրիստոնյաների պաշտպանության կազմակերպությունը:

Հայ դատի հանձնախումբը շնորհավորել է նախագահ Բայդենին և հրապարակել նոր վարչակազմի հետ աշխատանքի առաջնահերթությունները



Դրանք են՝ 250 միլիոն ԱՄՆ դոլարի մարդասիրական օժանդակության փաթեթ Արցախին, Թուրքիային և Ադրբեջանին ռազմական օժանդակության և ռազմական նշանակության արտադրանքի վաճառքի արգելք, Ալիևի և Էրդողանի վարչակարգերի նկատմամբ պատժամիջոցների կիրառում, Ադրբեջանի կողմից հայ բանտարկյալների ազատ արձակման գործում ամերիկյան գործուն դերակատարություն, Քրիստոնեական մշակութային ժառանգության պահպանություն, Արցախի անկախության ճանաչում, Հայաստան-Ամերիկա միջպետական հարաբերությունների վերակտիվացում:

Text Link

Հայ դատի Եվրոպայի հանձնախումբ

ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը հունվարի 15-ին հանդես եկավ հայտարարությամբ, որը

Անցնող ամսվա ընթացքում կարևոր նշանակություն ունեցան Եվրոպական Խորհրդարանի կողմից ընդունված ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականության (CFSP) և

վերաբերում էր հունվարի 11-ին Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների ու Հայաստանի վարչապետի կողմից ստորագրված եռակողմ հայտարարությանը, որը, ըստ գրասենյակի, անտեսում է հայկական կողմի կարիքները և խորացնում է անվտանգության վերաբերյալ անորոշությունը:

կարդալ ավելին

ԵՄ ընդհանուր անվտանգային և պաշտպանական քաղաքականության (CSDP) տարեկան զեկույցներում ղարաբաղյան հակամարտությանը վերաբերող շեշտադրումները: ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը ողջունում է այս երեք զեկույցները, որտեղ կարևոր հարցեր են բարձրացվում:

կարդալ ավելին

Մեծ Բրիտանիա

Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ քննարկում անցկացվեց Լորդերի պալատում

Հայ դատի Մեծ Բրիտանիայի հանձնախմբի ջանքերով հունվարի 18-ին Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ քննարկում անցկացվեց Լորդերի պալատում: Հակամարտության գոտում իրավիճակի վերաբերյալ կառավարությանը հարցում է կատարել բարոնուհի, մեր ժողովրդի մեծ բարեկամ Քերոլայն Քոքսը: Քննարկվել են Ադրբեջանին պատասխանատվության կանչելու վերաբերյալ ՄԹ անելիքները և հումանիտար այնպիսի կազմակերպությունների՝ Արցախ մուտքի հնարավորության հարցը, ինչպիսին Կարմիր Խաչի միջազգային կազմակերպությունն է, որպեսզի հնարավոր լինի խուսափել էթնիկ զտումներից: Բազմաթիվ խորհրդարանականներ դեմ են արտահայտնել ցեղասպանական գործողություններին, մշակութային հուշարձանների ոչնչացմանը, պատերազմական հանցագործություններին, ռազմագերիների պահմանը և առնչակից այլ հանգամանքների:

Կիպրոս

Կիպրոսի Հայ դատի հանձնախումբը հայտնում է, որ հունվարի 13-ին Եվրոպական Խորհրդարանի պատգամավոր, Հայաստանի հետ ԵԽ բարեկամության խմբի համանախագահ Լուկաս Ֆուրլասը Եվրոպական հանձնաժողովին է ներկայացրել Շուշիի Սբ. Ղազանչեցոց եկեղեցու նկատմամբ ադրբեջանական հարձակման փաստը՝ կոչ անելով ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ պաշտպանելու քաղաքացիական անձանց ու պաշտամունքային կենտրոնները:

Կիպրական Պաֆոս քաղաքում դեռևս առկա էր մի փողոց, որն անվանակոչված էր Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից Թալեաթ փաշայի անունով: Հանձնախմբի ջանքերով և Պաֆոսի քաղաքային խորհրդին հասցեագրված նամակի արդյունքում փողոցը վերանվանվեց Տիկեոսինիսի (արդարության) փողոցի:

Հաշվի առնելով, որ Լառնագա քաղաքի փողոցներից մեկը կրում է BOZ KURT (գորշ գայլեր) անվանումը, դիմեց Լառնագայի քաղաքապետարան, հայտնելով հանձնախմբի վրդովմունքը: Փոխքաղաքապետի հետ տեղի ունեցած զրույցի ընթացքում ներկայացվել են փողոցի անվանափոխության համար հիմք հանդիսացող պատճառները: Փոխքաղաքապետը խոստացել է, որ հարցը քննարկվելու է քաղաքի ավագանու կողմից: Հայ Դատի հանձնախումբն ուշադրությամբ հետևում է գործընթացին:

Ավստրալիա



Ավստրալիայի Հայ դատի հանձնախումբը շուրջ երկու ամիս առաջ հանրային խնդրագիր (petition) էր հրապարակել, որով ավստրալիական խորհրդարանին և կառավարությանը կոչ էր արվում ճանաչել Արցախի ժողովրդի ինքնորոշման

Ավստրալիայի Խորհրդարանի պատգամավոր, Հայաստան-Ավստրալիա միջխորհրդարանական բարեկամության խմբի ղեկավար Ջոնաթան Օ՛դին խստիվ

իրավունքը: Հունվարի 13-ի դրությամբ, երբ խնդրագրի լրացման վերջնաժամկետը սպառվեց, դրան միացած անձանց թիվը 3164 էր: Խնդրագիրը տեղադրված էր Ավստրալիայի Խորհրդարանի պաշտոնական էջում:

քննադատել է Ադրբեջանում տիրող ատելությունը հայ բնակչության և հայկական մշակութային ժառանգության հանդեպ, ինչը դրսևորվում է հատկապես Արցախում: Խորհրդարանականը, իբրև հակամարտության լուծման բանաձև, վերահաստատել է ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից ներկայացված կարգավորման երեք հիմնարար սկզբունքները:

Լիբանան

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը հունվարի 25-ին Լիբանանում Սաուդյան Արաբիայի դեսպան Ուալիտ Պուխարիին հղված նամակով ողջունեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից «Կրոնական վայրերը պաշտպանելու համար խաղաղության և հանդուրժողականության մշակույթի խթանում» խորագրով բանաձևի ընդունումը: Բանաձևը ներկայացվել էր Սաուդյան Արաբիայի կողմից: Այն դատապարտում է կրոնական վայրերի և խորհրդանիշների նկատմամբ բռնությունները, սպառնալիքները, այդ վայրերի քանդումը, դրանք վնասելը կամ վտանգելը:
ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը հիշեցրեց, որ ղարաբաղյան վերջին պատերազմի ընթացքում և դրանից հետո Արցախի հայկական մշակութային և կրոնական կոթողներին հասցվում են դիտավորյալ վնասներ, որոնք հիշեցնում են 2005-2006 թթ. ադրբեջանական բանակի կողմից Հին Ջուղայի հազարավոր խաչքարերի քանդումը:

Let's go!

Հայ դատի Կենտրոնական գրասենյակ | Mkher Mkrtchyan 12/1, Yerevan, 0010 Armenia

Unsubscribe haydat@arf.am

Update Profile | Customer Contact Data Notice

Sent by haydat@arf.am powered by

Constant Contact

Try email marketing for free today!